

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ռ Ի Մ 51/5

27 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց <Կեմրիկ> ՍՊԸ 12.11.2012թ. թիվ 03/12 գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 29.10.2012թ. թիվ 2117946 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 31.08.2012թ. թիվ 2117946 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Կեմրիկ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 29.10.2012թ-ին կազմվել է թիվ 2117946 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտի 3-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Ստուգմամբ պարզվեց, որ <Կեմրիկ> ՍՊԸ-ն ք.Երևան, Կոմիտաս 20 հասցեում իրականացնում է հանրային սննդի կազմակերպման գործունեություն: Ընկերությունը 2012թ. Արաբկիրի ՀՏ ներկայացրել է սեպտեմբեր ամսվա համար <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի հավելված 7-ով սահմանված հանրային սննդի գործունեություն իրականացնելու համար դիմում-հայտարարություն 205 քմ, սակայն ստուգմամբ պարզվեց 400 քմ սպասարկման մակերեսով ընդհանուր տարածք: Այսպիսով պակաս է ներկայացրել սեպտեմբերին 195 քմ ելակետային տվյալ: Սեպտեմբեր ամսվա համար ընկերությունը վճարել է 431550 դրամ արտոնագրային վճար, սակայն պետք է վճարեր 756000 դրամ:

Խախտվել է <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 10-րդ կետի 2-րդ մասի պահանջները: Այսպիսով սեպտեմբեր ամսվա համար պակաս է հաշվարկվել և վճարվել 324450 դրամ արտոնագրային վճար /756000-431550/: Համաձայն <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակի մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար արտոնագրում նշված արտոնագրի վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից փաստացի արձանագրված ելակետի տվյալի մեծությունից պակաս լինելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է տվյալ ժամանակահատվածի համար արտոնագրային վճարը և տուգանք պակաս վճարված արտոնագրային վճարի 50%-ի չափով, սեպտեմբեր ամսվա համար 162225 դրամ: Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները լրացուցիչ գանձման է առաջադրվել 489.054 դրամ արտոնագրային վճար:

<Կեմրիկ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Գտնում ենք, որ ակտի 3-րդ կետը կազմվել է օրենքի խախտումով, ուստի սույնով ակտի նշված մասն անվավեր ճանաչելու գանգատ է ներկայացվում:

<Կեմրիկ> ՍՊԸ-ն ք.Երևան, Կոմիտաս 20 հասցեում իրականացնում է հանրային սննդի կազմակերպման գործունեություն: 2012թ. սեպտեմբեր ամսվա համար <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի հավելված 7-ով սահմանված հանրային սննդի գործունեություն իրականացնելու համար դիմում-հայտարարություն է ներկայացրել Արաբկիրի ՀՏ, որտեղ որպես ելակետային տվյալ նշվել է 205 քմ սպասարկման մակերեսով ընդհանուր տարածք:

19.06.2012թ. Արաբկիրի ՀՏ պետից ստացվել է ծանուցում, ըստ որի ՀՀ ԿԱ ՊԵԿ Գերատեսչական հսկողության վարչության կողմից կատարված դիտարկումների արդյունքում վերոնշյալ հասցեում գտնվող հանրային սննդի կազմակերպմամբ զբաղվող բացօթյա սրճարանում հայտնաբերվել են խախտումներ՝ կապված հայտարարագրված ելակետային տվյալների հետ: 22.06.2012թ-ին պատասխան է ուղարկվել ծանուցմանը, որում նշվել է, որ

ընկերության կողմից կրկին չափագրվել է հայտարարագրված տարածքը, որի արդյունքում օրենքով սահմանված հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը կազմում է 205 քմ: Վերջինս ներառում է սրճարանի բարը, շատրվանը, բետոնե հարթակով և ծածկով հստակ տարանջատված տարածքը, որոնց մակերեսների հանրագումարն ըստ <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 8 հավելվածի 13 կետի 1-ին ենթակետով սահմանված կարգի, հիմք է հանդիսացել սահմանված ձևի հայտարարության մեջ որպես ելակետային տվյալի մեծություն ներկայացնելու համար:

Այնուհետև բացվել է Արաբկիրի ՀՏ պետի հանձնարարագիրը և ստուգման արդյունքում 17.10.2012թ. կազմվել է թիվ 2117946 ակտի նախագիծը, որը փոստային ծանուցման միջոցով ուղարկվել է <Կեմրիկ> ՍՊԸ-ին: Ակտի նախագծին 25.10.2012թ. ներկայացվել է գրավոր առարկություն, որտեղ նշել ենք, որ մեզ համար անհասկանալի է, թե ինչպես է չափագրվել և որ մակերեսն է հիմք ընդունվել հավելյալ 195 քմ որպես սպասարկման մակերես դիտարկելու համար, ինչպես նաև խնդրել ենք հիմնավորել և տրամադրել ստուգմամբ արձանագրված 400 քմ սպասարկման սրահի մակերեսի չափագրման մեթոդներն ու հիմքերը: Արաբկիրի ՀՏ կողմից մեր գրությանը տրվել է պատասխան, որտեղ նշվում է, որ ակտի նախագծով արտացոլված սպասարկման սրահի մակերեսը հաշվարկվել է <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի համաձայն: Այսինքն, հստակ պատասխան չի տրվել մեր հարցին:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը գտնում է, որ հարկային մարմինների կողմից արձանագրված արտոնագրային վճարների գծով լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն բխում գործող օրենսդրությունից և ենթակա չեն գանձման, ուստի ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 29.10.2012թ. թիվ 2117946 ակտի երրորդ կետը ենթակա է անվավեր ճանաչման:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

<Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 8 հավելվածի 10 կետի համաձայն. <Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով արտոնագրային վճարի մեկամսյա չափը որոշվում է ելակետային տվյալին համապատասխանող մեկամսյա դրույքաչափով, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում՝ մեկամսյա դրույքաչափի և գործակիցների արտադրյալով>:

Իր հերթին <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 8 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն. <Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար՝ հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսը, որն իր մեջ ներառում է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը, իսկ բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը.>:

Բացօթյա վայրում հանրային սննդի գործունեության սպասարկման ընդհանուր մակերեսի հաշվարկման կարգը տրված է <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ պաշտոնական թիվ 25 պարզաբանումով: Մասնավորապես, նշված պարզաբանման 16-րդ կետի համաձայն. <Բացօթյա վայրում հանրային սննդի գործունեություն իրականացնելու դեպքում սպասարկման ընդհանուր մակերես է համարվում՝

- որևէ կերպ սահմանազատված (պատ, պարիսպ, ցանկապատ կամ համանման այլ ձևերով) տարածքի մակերեսը, կամ

- ծայրամասային (եզրային) սեղանների, տաղավարների (բեսեդկա) կամ համանման ժամանակավոր այլ կառույցների (ներառյալ գրանցում մեկ կամ մի քանի սեղաններ ներառող), ինչպես նաև այլ օժանդակ կառույցների (խոհանոց, հաճախորդների ժամանցի համար

նախատեսված կառույցների և այլն) եզրակետերով տարված առավելագույն շրջագծում ընդգրկվող տարածքի մակերեսը:

Բացօթյա վայրում երկու և ավելի հարթակների (կառույցի հարկերի) վրա կամ միաժամանակ՝ սահմանազատված և չսահմանազատված տարածքներում հանրային սննդի գործունեություն իրականացնելու դեպքում՝ որպես սպասարկման սրահի մակերես ընդունվում է յուրաքանչյուր հարթակի համար բացօթյա վայրերի համար սույն կետում նշված կարգով որոշված մակերեսների հանրագումարը>:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները (տարածքի ֆոտոնկարները), ինչպես նաև հաշվի առնելով սպասարկման սրահի մակերեսի հաշվարկման վերաբերյալ ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, եկավ եզրակացության, որ ստուգման ընթացքում սպասարկման սրահի ընդհանուր մակերեսը որոշվել է վերը նշված իրավական ակտի և պաշտոնական պարզաբանման պահանջների խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Արկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 29.10.2012թ. թիվ 2117946 ակտի 3-րդ կետը:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ